



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ  
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

14 մարտի 2017թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի թիվ 2  
դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ֆ. Թոխյանի  
Անդամակցությամբ՝ Հ. Նազարյանի  
Ա. Խաչատրյանի

Քննության առնելով Անահիտ Մնացականյանի անհատական դիմումի ընդունելիության  
հարցը,

**Պ Ա Ր Զ Ե Ց .**

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ Անահիտ Մնացականյանը 2017թ. փետրվարի 27-ին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով.

«Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասը ճանաչել ՀՀ Սահմանադրության 1-ին և 79-րդ հոդվածների պահանջներին հակասող:

Սույն անհատական դիմումի նախնական ուսումնասիրությունը ցույց տվեց, որ.

1. Դիմողը գտնում է, որ վիճարկվող դրույթը չի կարգավորում հարկվող օբյեկտի՝ անշարժ գույքի բաժանման դեպքում, մեկից ավելի հարկվող օբյեկտների հարկի հաշվարկման կարգը:

Ըստ դիմողի՝ վիճարկվող նորմը գույքահարկ գանձող մարմնի և դատական համակարգի կողմից կիրառվել է գույքի բաժանման դեպքում հարկը հաշվարկելու համար՝ բաժանումը նույնականացնելով օտարման հետ:

Դիմողը պնդում է, որ վիճարկվող դրույթի և առկա դատական որոշումների արդյունքում վտանգվում է նաև պետության/համայնքի գույքային շահը, քանի որ հնարավորություն է տալիս կառուցապատողին՝ շենքի կառուցումից հետո արագ օտարել գույքային բոլոր միավորները գրոյական հարկով, այդ պահին շարունակելով մնալ պարտավոր շենքի գույքահարկի համար, սակայն տարեվերջին՝ հարկային պարտավորության վճարման ժամկետին՝ սնանկանալ:

2. Դիմումի և կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ առկա չեն դիմումի քննությունը մերժելու հիմքեր, քանի որ՝

- դիմումում առաջադրված հարցերը ենթակա են սահմանադրական դատարանին,
- դիմողն իրավասու է դիմել սահմանադրական դատարան,
- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ սահմանադրական դատարանի որոշում,
- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում,
- դիմողը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

### **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. «Անահիտ Մնացականյանի դիմումի հիման վրա՝ «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործն ընդունել քննության:

2. Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

Նախագահող՝

Անդամներ՝

14 մարտի 2017 թվականի  
ՍԴԴԿՈ/2-5